

ԱՐՕԹՔԻ ԵՒ ԾՈՍԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ծովապահուկեամբ մարմինը կը չար-չարուի ու կը տկարանայ, եւ եթէ ուզէ իսկ չի կրնար պոռնկիլ: Այսպէս օրինակ, կը պատմուի, թէ վաւաշոտ մարդ մը գեղեցիկ եւ ազնուական կին մը կը սիրէ եւ անոր հաւանութիւնը կը խնդրէ: Կինը կ'ըսէ. «Եթէ հետս անօթի մնաս մինչեւ քեզ կերակուրի կանչելս, ուզածդ թո՛ղ ըլլայ»: Մարդը կը համաձայնի: Կինը երկու օր, հետը նաեւ մարդը՝ ծով կը բռնեն: Երբորդ օրը ան կը պատրաստ սեղանը, ինչպէս նաեւ շքեղ անկողին մը, եւ կանչելով մարդը կ'ըսէ անոր. «Ի՞նչ պէս կ'ուզես, անկողի՞ն մտնենք, թէ ճաշենք»: Մարդը կ'աղաղակէ. «Կը հրաժարիմ անկողինէն, որովհետեւ աշխարհի բոլոր կիները կ'ատեմ հիմա, բայց կ'ուզեմ ճաշել, որպէսզի սովէ չմեռնիմ»:

Տեսա՞ր, թէ երբ ծով չէր բռնած ինչպէս կը նեղուէր ախտէն, իսկ պահեցողութենէն ետք բժշկուեցաւ անկէ: Ուստի, միշտ ըսուած է, թէ պոռնկութիւնը ծովով կը բուժուի, իսկ մտային փորձութիւնները՝ աղօթքով: Եւ այսպէս ծովով եւ աղօթքով մեղքերու թողութիւն կը ստանանք Աստուծմէ, որովհետեւ մեծ գորութիւն ունի աղօթքը, մանաւանդ գիշերային աղօթքը: Ինչպէս որ Պօղոսն ու Շիղան գիշերը աղօթելով շղթաները քակեցին եւ բանտին դռները բացին (Գործք. 16.25-27), նոյնը ընենք եւ մենք բանանք ո՛չ թէ բանտը, այլ՝ երկինքը:

ՆՇԽԱՐ



Մաքուր ալիւրով եւ առանց թթւմորի պատրաստուած կոբ այն հացն է նշխարը, որ Ս. Հաղորդութեան հիմնական միւսքը կը կազմէ գինիին հետ:

Նշխարի պատրաստութիւնը տեղի կ'ունենայ մասնաւոր տիպով (պիտի անդրադառնանք), որուն վրայ փորագրուած կ'ըլլայ խաչելութեան, Ս. Յարութեան կամ Գառն Աստուծոյ պատկերը, եւ այդ պատկերը կոբ խմորի վրայ զգուց կը կնքուի:

Նշխարի միւս կողմը նկատով (որուն մասին անդրադարձանք նախապէս) կը ծածկեն, որպէսզի երկաթեայ թիթեղին վրայ եփուած պահուն հացի մման չուրի:

Տաղաւար տօներուն, երբ հաղորդւողներուն թիւը մեծ կ'ըլլայ, աւելի մեծ նշխարներ կարելի է պատրաստել մեծ տիպերով:

Ս. Պատարագի համար գործածելի նշխարը նոյն առաւօտեան պէտք է պատրաստուի, իսկ ինչ որ ժողովուրդին պիտի բաժնուի, կարելի է նախապէս պատրաստել:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ՓԵՏՐՈՒԱՐ 2022

ԹԻՒ 7

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.63.7-19: Բ.ՏՄ. 3.1-12 Յհ.6.22-38

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԿԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԱՆՆԵՍԻ 6.22-38

Յաջորդ օրը, ժողովուրդը, որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին, իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին՝ որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով, թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաւում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վատահաբար դուք զիս կը փնտռէք ոչ թէ, որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ՝ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը, որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք դրկեց»:

Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք: Ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. “Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար”»:

Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը այն է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան, որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ եւ ան, որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց ես ձեզի ըսի, թէ դուք զիս տեսաք ալ եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք, որ Հայրը ինձի կու տայ՝ ինձի պիտի գան եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ, որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց»:

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐՎԱՐ



Սուրբ Սարգիս Զօրավար Կապադովկիոյ Գամիթի գաւառէն էր: Քաջ եւ առաքինի զինուորական մը, որ զօրապետի աստիճանին հասաւ: Համարձակութեամբ կը քարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բազմոցները:

Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիստոնէութիւնը ուրացած էր՝ գահ բարձրացաւ, Սարգիս իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան ապաստանեցաւ, Տիրան թագաւորին մօտ եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան, Պարսից Շապուհ թագաւորին մօտ՝ ծառայելով զինուորական ասպարէզին մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ զօրքին վրայ: Անոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ դառնալով, Սարգիս եւ իր գաւակը արքայական հրաւեր ստացան զոհ մատուցանելու արքունի մեհեանին մէջ:

Սակայն Սուրբ Սարգիս նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կոտորելու:

Առ ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին՝ զօրավարն ու իր որդին մահուան դատապարտուեցան:

Իր պարսիկ զինուորներէն տասնչորս անձեր, որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին, առին Սարգիսի մարմինը եւ մահուր գգեստներով պատեցին: Ս. Սարգիսի տօնը Հայաստանի մէջ ընդունուած է նշել ոչ միայն որպէս եկեղեցական ծիսական կատարողութեամբ, այլեւ՝ ժողովրդական սովորութիւններով:

Ս. Սարգիս զօրավարը երիտասարդներու արագահաս բարեխօսն է եւ սիրոյ երազանքը իրականացնող սուրբը:

Տօնի նախօրեակին երիտասարդուհիները հնգօրեայ պահքը կը պահեն յուսալով՝ որ Ս. Սարգիս իրենց բախտ պիտի բերէ եւ ապագայ կեանքի ընկերը գտնէ:

Ըստ աւանդութեան, Ս. Սարգիս պէտք է տանիքը դրուած ալիւրին մէջ ձգէ իր սպիտակ ձիուն պայտին հետքը, որպէսզի այդ տարի իրականանայ հաւատացեալին երազը:

Լիբանանի թեմէն ներս ունիմք Սուրբին անունը կրող եկեղեցի, որ կը գտնուի Պուրն Համուտի Սիս շրջանը եւ որուն անուանակոչութեան տօնը կը գուհադիպի այսօր՝ 13 Փետրուարին:

ՊԿԷՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Խիստ պահեցողութիւնը եւ ժուժկալութեան առաքինութիւնը զօրաւոր են. անոնք կը շղթայեն մարմնի բոլոր անդամները եւ զանոնք կը զրկեն բոլոր տեսակի անպատեհ ցանկութիւններէն ու անմաքուր մտածումներէն, միտքերէ հեռու կը վանեն դէւերու յարձակումները, որոնք կ'ուզեն պղտորել ու պղծել մաքրաւածներուն սիրտերը, որովհետեւ, պահեցողութիւնը շղթայի մը նման ամուր կը դարձնէ եւ կը պահէ բարոյական բոլոր առաքինութիւններն ու հաւատքի զօրութիւնը:

Յովհան Մանդակունի

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Ղ Ա Ս Գ Ա Ս

ԵՔԷ ԱՌԻՔԸ ՈՐՆԻՆՔ՝ ՓՎԱՍԻՆՔ ՓՈՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ

Գալիլեա էր Յիսուս երբ լսեց Յովհաննէս Մկրտիչի գլխատումին մասին եւ ձգեց Գալիլեան եւ ամայի վայր մը գնաց՝ Բեթսայիդայի մօտիկ (Մտ. 14.13): Արիւնի ծարաւ մարդ էր Հերովդէս չորրորդապետ, որ կը կոչւէր նաեւ՝ Հերովդէս Անտիպաս: Յիսուս զիտէր այս մէկը, եւ առաւել եւս չգրգռելու համար անոր արեան ծարաւը՝ իսկոյն հեռացաւ անոր շրջանէն՝ Յովհաննէս Մկրտիչի մահէն ետք:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Ղ Ա Ս Ա Ը

Յիսուս իր այս վերաբերմունքով սորվեցուց մեզի, որ պէտք չէ դէմ դնենք չարին, այլ՝ եթէ առիթը ունինք խուսափելու անկէ՝ խուսափինք: Այս ըսել ուզեց Յիսուս երբ ըսաւ. «Երբ հալածեն ձեզ քաղաքի մը մէջ, ուրիշ քաղաք մը փախէք, եւ եթէ հոնկէ ալ հալածեն՝ փախէք այլ քաղաք մը» (Մտ. 10.23): Որոգիներս կ'ըսէ. «Երբ փորձութիւնը գայ, փախինք անկէ եթէ կարելիութիւնը ունինք, իսկ եթէ չունինք՝ քաջաբար դիմակալենք գանձիկա: Նախընտրելի է փախիլ փորձութենէն քան դէմ դնել անոր եւ սակայն պարտուած դուրս գալ:

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՄԷ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿՈՒՉԵՍ, Կարդա՛ր.՝ ՍԱԳՄՈՍ 54

Փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած, դուն՝ որ փրկիչ ես: Պաշտպանէ՛ դատս, դուն՝ որ հօգր ես: Լսէ՛ աղօթքս, ո՛վ Աստուած: Ականջ տուր խօսքերուս: Անբարտաւան մարդիկ վրաս յարձակեցան, անգութ մարդիկ կ'ուզեն վերջ տալ իմ կեանքիս, առանց նկատի առնելու քեզ, ո՛վ Աստուած: Բայց դուն, ո՛վ Աստուած, օգնական ես, միակ պաշտպանս ես, Տէ՛ր: Թշնամիներու խորհած չարիքը դուն իրենց գլխուն թափէ, եւ բնաջընջէ՛ զիրենք, դուն՝ որ հաւատարիմ ես: Կամաւոր կերպով քեզի զոհ պիտի մատուցանեմ, երախտիքս պիտի յայտնեմ քեզի, Տէ՛ր, ինչպէս որ կը վայելէ, որովհետեւ զիս փրկեցիր բոլոր նեղութիւններէս եւ ես թշնամիներու անկումը տեսայ:

ԱՍՏ ՈՒ ԱԾԱՇ ՈՒՆՉԸ

Այգին տարին միայն մէկ անգամ պտուղ կու տայ, իսկ Աստուածաշունչը տարուան բոլոր ամիսները եւ ամսուան բոլոր օրերը պտուղ կու տայ, անդադար կերպով կենսատու վարդապետութիւն բխեցնելով զայն քննողներուն: Երբ հողը կը հնձուի՝ կը սպառի, երբ պտուղը կը քաղուի՝ կը վերջանայ, մինչդէռ Աստուածաշունչը միշտ կը հնձուի եւ սակայն մեկնիչներ հոն միշտ կը գտնեն հասկ իրենց համար: Աստուածաշունչին այգին ամէն օր կը քաղուի, բայց հոն երբեք ողկոյզները չեն պակսիր:

Եփրեմ Խուրի Ասորի